Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 9, 12 և 14 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 9 որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասին, այն է՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Թիվ 12 որոշման նախաբանում Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9 որոշման 19-րդ կետին կատարված հղումը սխալ է, քանի որ հղում է կատարվել ուժի մեջ չմտած իրավական ակտի (թիվ 9 որոշումը ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը): Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հղումները կատարվում են միայն հիմնական ակտին կամ հիմնական ակտի մասերին: Հետևաբար, թիվ 12 որոշումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետք է անվավեր ճանաչվի կամ նախաբանում համապատասխան փոփոխություն կատարելով՝ որոշումը համապատասխանեցվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին:

Թիվ 14 որոշման մեջ հղում պետք է կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին:

Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
03.03.2020թ.